ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

28-Ը ՓԵՏՐՎԱՐԻ 2025 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ՝ 6-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԹԻՎ 1-ԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 10 (տասն) անդամներ:

Բացակա էին՝ Հ. Աբրահամյանը, Լ. Դանիելյանը, Հ. Մարգարյանը, Կ. Մելքումյանը, Զ. Մարգարյանը:

Համայնքի ղեկավարի 1-ին տեղակալի իրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Հ. Մանուկյանը, Ա. Մկրտչյանը, Հ. Հարությունյանը, Ա. Օհանյանը, Լ. Դանիելյանը, Ս. Խաչատրյանը

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ՝ Հասմիկ Գրիգորյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Աննա Դանիելյանը

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ՝ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1.Հաստատել 28-ը փետրվարի 2025թ. վեցերորդ նստաշրջանի հերթական առաջին նիստի օրակարգը հետևյալ հարցերով՝

2.Եղեգիս համայնքի ավագանու 20/12/2024 թ. թիվ 130 Ն որոշման հավելվածում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին,

3.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին,

4.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը, և 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը հաստատելու մասին,

5.Եղեգիս համայնքի ղեկավարի հաղորդումները 2024թ. չորրորդ եռամսյակի բյուջեի կատարման ընթացքի մասին,

6.Եղեգիս համայնքի տարածքում անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցների երթևեկության թույլատրելի և արգելված վայրեր սահմանելու մասին,

7.Հորս գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին,

8.Եղեգիս գյուղի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողատեսքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին,

9.Եղեգիս համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի երկրորդ նիստի գումարման օրը սահմանելու մասին,

10.Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից գործադրվող տեղական զարգացման հիմնադրամի շրջանակներում դրամաշնորհային մրցույթին մասնակցելուն և համաֆինան¬սավորումը ապահովելուն համաձայնություն տալու մասին,

11.Եղեգիս համայնքի ավագանու 20/12/2024թ. թիվ133Ա որոշման կից հավելվածում փոփոխություններ կատարելու մասին,

12.Եղեգիս համայնքի ավագանու 20/12/2024թ. թիվ135Ա որոշման բովանդակության մեջ փոփոխություններ կատարելու մասին,

13.Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով

տնտեսական զարգացման ծրագրային հայտեր հաստատելու մասին,

14.Եղեգիս համայնքի Հորս գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերն աճուրդային կարգով օտարելու մասին,

15.Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0,19556 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքն աճուրդային կարգով օտարելու մասին,

16.Սալլի գյուղի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողատեսքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին,

17.Համայնքային նշանակության փողոցի անվանակոչման մասին:

18.Նախկին Գողթանիկի համայնքապետարանի և «Գոլդեն Գոուլ» ՍՊԸ-ի միջև կնքված վարձակալության պայմանագրի ժամկետի փոփոխություն կատարելու և լրացուցիչ համաձայնագիր կնքելու մասին,

19.Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0,33014հա մակերեսով վարելահող հողատեսքն աճուրդային կարգով օտարելու մասին:

20. Տարեկցքի բյուջեի [illegible] հաստատելու մասին:

20.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 12 Ա/

ԼՍԵՑԻՆ

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 20/12/2024 Թ. ԹԻՎ 130 Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄՈՒՐԱԴ ՕՀԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2)-րդ կետի և 3-րդ մասի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Եղեգիս համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքում 2025 թվականի տեղական

տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 130Ն որոշման կից հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1)Որոշման կից հավելվածի տեղական տուրքեր մասում 2-րդ կետի 3)-րդ ենթակետից հետո կատարել լրացում հետևյալ բովանդակությամբ՝

«4)Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի և շինությունների շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման յուրաքանչյուր տարվա (այդ թվում՝ ոչ ամբողջական) համար՝

ա. սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ, լեռնային և բարձրլեռնային բնակավայրերի համար կարող են հաշվարկվել 0.3, գյուղական այլ բնակավայրերի համար՝ 0.5 գործակիցների կիրառմամբ:»:

2)Որոշման կից հավելվածի տեղական վճարների մասում հանել 12-րդ կետը:

Կողմ-5 Դեմ-3 Չեռնպահ-1

Ա. Ամիրյան
Հ. Դրոյան
Հ. Ավետիսյան
Հրաչիկ Ամիրյան

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 13Ն/

Հակոբյան Ֆ. Բարսեղի (տեղակալ տեղամ)

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. <u>ՄՈՒՐԱԴ ՕՀԱՆՅԱՆ</u>)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն սույն որոշման 1-13 հավելվածների:

Կողմ-0 Դեմ-10 Չեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 14 Ա/

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ, ԵՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄՈՒՐԱԴ ՕՀԱՆՅԱՆ, և Վիոլետա Դարբինյան)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 82.1.-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ավագանու Ֆինանսատնտեսական և զբոսաշրջության հարցերի մշտական հանձնաժողովի կողմից տրամադրված «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությանը և 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությանը դրական եզրակացություն տալու մասին» որոշումը

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն սույն որոշման կից հավելված 1-ի:

2.Հաստատել Եղեգիս համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն սույն որոշման կից հավելված 2-ի:

Կողմ- 5 Դեմ- 5 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 15 Ա/

ԼՍԵՑԻՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԸ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄՈՒՐԱԴ ՕՀԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 83-րդ

հոդվածի 2-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Ընդունել ի գիտություն Եղեգիս համայնքի ղեկավարի հաղորդումները 2024թ. չորրորդ եռամսյակի բյուջեի կատարման ընթացքի մասին՝ համաձայն սույն որոշման կից հավելվածի:

Կողմ-5 Դեմ-5 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 16 Ա/

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ (ՏԵՂԱՇԱՐԺՄԱՆ) ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԵՎ ԱՐԳԵԼՎԱԾ ՎԱՅՐԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*(Ձեկ. _ _ _

4)/Հ-79/ - Թառաթումբ ճանապարհի ամբողջ երկայնքով,

5)/Տ-9-21/ - Արտաբույնք - Հորբատեղ ճանապարհի ամբողջ երկայնքով,

6)/Մ-10/- Գեղհովիտ-Քարագլուխ-/Մ-2/ ավտոճանապարհի ամբողջ երկայնքով:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-6 Դեմ-0 Չեռնպահ-2 Հ. Դոլուխանյան, Ա. Սարգսյան

Ա. Սարգսյան
Հ. Դոլուխանյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 17 Ա/

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀՈՐՍ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. <u>ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ</u>)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021թ. հունիսի 17-ի «Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերը սահմանելու մասին» 987-Ն որոշման 1-ին մասի 14-րդ կետը, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի, համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի և բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-ն, 2010 թվականի մարտի 4-ի N 208-ն ու Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 408 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1920-Ն որոշման պահանջները

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Հորս գյուղի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը, ըստ որի նախատեսվում է՝ Հորս գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.05հա մակերեսով (կադաստրային ծածկագիր՝ 10-031-0103-0025) այլ հողատեսքը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը էներգետիկայի՝ ՓՀԷԿ կառուցելու համար:

2.Համայնքի ղեկավարին՝ կազմել և «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները

համակարգող միջգերատեսչական հանձնաժողով»-ի համաձայնեցմանը ներկայացնել համապատասխան հողաշինական գործը:

Կողմ-10 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 18 Ա/

ԼՍԵՑԻՆ

ԵՂԵԳԻՍ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը ապրիլի 2021 թվականի թիվ 698-Ն որոշման 31-րդ մասի 7-րդ կետը, 39-րդ մասի 1-ին կետը, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 21/11/2024թ. N՝ Կ-20002024-10-0289 որոշումը՝ գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Եղեգիս գյուղի վարչական սահմաններում գտնվող սխալմամբ «քաղաքացու սեփականություն» փոխանցված գյուղատնտեսական նշանակության վարելահող հողատեսքը (կադաստրային ծածկագիր՝ 10-021-0112-0018, մակերեսը՝ 0,36309 հա) ճանաչել որպես համայնքային սեփականություն:

2.Համայնքի ղեկավարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 19 Ա/

ԼՍԵՑԻՆ

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի պահանջով

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Եղեգիս համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի երկրորդ նիստի գումարման

օր սահմանել 2025 թվականի մարտի 18-ին, ժամը 15:00-ին:

Կողմ-10 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 20 Ա/

ԼՍԵՑԻՆ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾԱԴՐՎՈՂ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ)

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված դրույթները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի կարգավորումներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Համաձայնություն տալ Եղեգիս համայնքի մասնակցությանը Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից գործադրվող Տեղական զարգացման հիմնադրամի շրջանակներում դրամաշնորհային մրցույթին:

2.Համաձայնություն տալ դրամաշնորհային մրցույթին ներկայացվող ծրագրային հայտ-առաջարկի հաստատման դեպքում Եղեգիս համայնքի 2025թ. բյուջեից կատարել համապատասխան համաներդրումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ- 10 Դեմ- 0 Չեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 21 Ա/

ԼՍԵՑԻՆ

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 20/12/2024 Թ. ԹԻՎ 133 Ա ՈՐՈՇՄԱՆ ԿԻՑ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄՈՒՐԱԴ ՕՀԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1)-ին կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Եղեգիս համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի «2025 թվականի համար Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, կառուցվածքը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 133Ա որոշման կից հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1)Որոշման կից հավելվածի առաջին տողում «565 000» թիվը փոխարինել «550 000»թվով:

2)Որոշման կից հավելվածի ընդամենը տողում «12 268 786,4» թիվը փոխարինել «12 253 786,4» թվով:

Կողմ- 10 Դեմ- 0 Չեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 22 Ա/

ԼՍԵՑԻՆ

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 20/12/2024 Թ. ԹԻՎ 135 Ա ՈՐՈՇՄԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄՈՒՐԱԴ ՕՀԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1)-ին կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Եղեգիս համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի «2025 թվականի համար Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի ղեկավարի վարձատրության չափ սահմանելու մասին» թիվ 135Ա որոշման բովանդակության մեջ «565

000 (հինգ հարյուր վաթսունհինգ հազար)» թիվը և բառերը փոխարինել «550 000 (հինգ հարյուր հիսուն հազար)» թվով և բառերով:

Կողմ- 10 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 23 Ա/

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջներով

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Հաստատել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով համայնքի կողմից զարգացման ծրագրերին մասնակցելու վերաբերյալ ստորև ներկայացվող հայտերը՝

1) Հորս, Թառաթումբ, Աղնջաձոր, Արտաբույնք, Շատին, Սալլի գյուղերում ոռոգման ցանցի վերակառուցում,
2)Քարագլուխ, Եղեգիս գյուղերում ՕԿՋ-ի կառուցում, Գողթանիկ գյուղում կապտաժի կառուցում և Հորբատեղ գյուղում խմելու ջրի արտաքին ցանցի վերակառուցում,
3)Շատին գյուղի դեպի հիվանդանոց տանող գյուղամիջյան ճանապարհի ասֆալտապատում,
4)Եղեգիս համայնքի Շատին գյուղում համայնքապետարանի շենքի կառուցում,
5)Ֆուտբոլի դաշտի կառուցում Շատին բնակավայրում,
6)Խաղահրապարակի կառուցում Քարագլուխ գյուղում:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 2 Հ. Բաբայան, Վ. Սմբատյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 24 Ա/

ԼՍԵՑԻՆ

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՐՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Տալ համաձայնություն Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Հորս գյուղի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հետևյալ հողատեսքերը օտարելու վերաբերյալ (մեկ լոտ). Վարելահող, այլ հողատեսք, կադաստրային ծածկագիր՝ 10-031-0107-0027, մակերեսը՝ 0,54761հա, որից՝ վարելահող 0,34139հա, այլ հողատեսք 0,20622հա:

Վարելահող, այլ հողատեսք, կադաստրային ծածկագիր՝ 10-031-0107-0028, մակերեսը՝ 1,32406հա, որից՝ վարելահող 0,62561հա, այլ հողատեսք 0,69845հա:

Այլ հողատեսք, կադաստրային ծածկագիր՝ 10-031-0109-0009, մակերեսը՝ 0,31հա:

Վարելահող հողատեսք, կադաստրային ծածկագիր՝ 10-031-0107-0030, մակերեսը՝ 0,42հա:

2.Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 100 (մեկ հարյուր տոկոս) % չափով:

3. Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ-9 Դեմ- 0 Ձեռնպահ- 1 Ա. Ավետիսյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 25 Ա/

ԼՍԵՑԻՆ

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՏԻՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,19556 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքն աճուրդով օտարելու մասին.

կադաստրային ծածկագիր 10-035-0247-0027, մակերեսը 0,19556հա, մեկ լոտ:

2.Մեկնարկային գին սահմանել (30 000 դրամ) տոկոսի չափով:

3. Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ- 10 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 26 Ա/

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՍԱԼԼԻ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. <u>ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ</u>)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով թիվ ԱՎԴ4/0433/02/22 քաղաքացիական գործով Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 12.09.2023թ. վճիռը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Սալլի գյուղի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության վարելահող հողատեսքը (կադաստրային ծածկագիր՝ 10-038-0101-0311, մակերեսը՝ 0,1 հա) ճանաչել որպես համայնքային սեփականություն:

2.Համայնքի ղեկավարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ-9 Դեմ- 0 Չեռնպահ- 1 Հ. Հ. Բարսեղյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 27 Ա/

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՄԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշման 3-րդ գլխի դրույթները, հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Աղնջաձոր գյուղի Գեղարքունիքի մարզ տանող փողոցը անվանակոչել՝ «Աղնջաձոր-Գեղհովիտ խճուղի» անվամբ:

Կողմ- 10 Դեմ- 0 Չեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 28 Ա/

ԼՍԵՑԻՆ

ՆԱԽԿԻՆ ԳՈՂԹԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ «ԳՈԼԴԵՆ ԳՈՈՒԹ» ՍՊԸ-Ի ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԳԻՇՏԻ ՆԱԶԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1)-ին կետի պահանջներով, հիմք ընդունելով նախկին Գողթանիկի համայնքապետարանի և «Գոլդեն Գոուր» ՍՊԸ-ի միջև կնքված վարձակալության պայմանագիրը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Համաձայն նախկին Գողթանիկի համայնքապետարանի և «Գոլդեն Գոուր» ՍՊԸ-ի միջև կնքված վարձակալության պայմանագրի 2.2 կետի՝ տալ համաձայնություն կնքված

պայմանագրի 2.1 կետում կատարելու փոփոխություն, և «25 (քսանհինգ)» թիվը և բառը փոխարինել «2025 թ հունվարի 1»-ով թվով և բառով:

2. Եղեգիսի համայնքապետարանի և «Գոլդեն Գոուլդ» ՍՊԸ-ի միջև կնքել համաձայնագիր:

Կողմ- 10 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 29 Ա/

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՏԻՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,33014ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՎԱՐԵԼԱՀՈՂ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. <u>ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ</u>)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահող հողատեսքն աճուրդով օտարելու մասին.

կադաստրային ծածկագիր 10-035-0001-0120,,մակերեսը 0,33014հա, մեկ լոտ:

2.Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 100 (տոկոս հարյուր) տոկոսը:

3. Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ- 1 Դեմ- 7 Ձեռնպահ- 2 Հ. Դոլուխանյան Հ. Հովսեփյան Վ. Բրյուզ

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 30 Ա/

Հոկտեմբերի հանձնաժողովը ընտրամասերում ընտրողներին գործիքներով ապահովելու նպատակով ցանկալի հասցեագրելու մասին

Ղեկավարվելով «Ընտրական իրավունքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1 մասի 14-րդ կետի, 11-րդ հոդվածի, 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 84-րդ հոդվածի պահանջներով

Հանձնաժողովը որոշում է՝

1. Հոկտեմբերի հանձնաժողովի 2025 թ. բյուջեում հատկացնել 4.247.400 (չորս միլիոն երկու հարյուր քառասունյոթ հազար չորս հարյուր) դրամ ցանկալի՝ 2025 թ. ծերությունից ընտրողներին ընտրամասերում գործիքներով ապահովելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրանում հրապարակմանը օրվան հաջորդող օրվանից:

Դեմ 0 Ձեռնպահ 0

Որոշումն ընդունվեց՝ 5. / կողմ 5 որոշում N 31 (հ.)

Ավագանու անդամներ՝

Ստեփանյան Արթուր բացակա է

Մարտիրոսյան Նարեկ բացակա է

Մարտիրոսյան Զոյա բացակա է

Հակոբյան Արտուշ

Պողոսյան Հրաչյա

Մանուկյան Սաթինե

Նազարյան Արգիշտի

Ղահրամանյան Վարդան բացակա է

Գաբրիելյան Ահարոն

Սմբատյան Մամիկոն

Հարությունյան Կարեն

Սմբատյան Արսեն

Ստեփանյան Սաշա

Միքայելյան Քրիստինա բացակա է

Բաբայան Վահե

Համաձայն ԿԵՎԱՀԻ 1-ի 2 կետի պահպանման

Նիստն արձանագրեց՝ Աննա Դանիելյանը